## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**2 հոկտեմբերի 2013 թվականի N 90-Ա**

### Ռ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 161-րդ հոդվածների դրույթներով, ՀՀ Սյունիքի մարզպետարանի կանոնադրության 22-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թվականի նոյեմբերի 5-ի «Մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող քաղաքացիների և այդպիսի գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին հատկացվող արտոնությունների մասին» N 487 որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանին 2013թ. հոկտեմբերի 9-ից տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա և լրացուցիչ արձակուրդը՝ 29 աշխատանքային օր: Աշխատանքի մեջ համարել 19.11.2013թ.

Համաձայն «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի՝ վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

2.Ռազմիկ Ղազարյանի՝ արձակուրդում գնվելու ընթացքում աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանի վրա:

3.Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*2013թ. հոկտեմբերի 2*
*ք. Կապան*